

ԱՐԱՐՈՆՅԱԼ ՍԵՐԳԵՅ ԱՇՈՏԻ

ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՍԻՎՆԵՐԻ ՁԵՄԱՏՄԱՆ
ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
(ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի ազգային ազդարային համալսարանում:

Գիտական ղեկավար՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Բայադյան Աշոտ Հակոբի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

տնտեսագիտության դոկտոր պրոֆեսոր
Սալևազարյան Աշոտ Բորիսի

տնտեսագիտության թեկնածու
Բաղդասարյան Զրիստինե Յուրիի

Առաջատար կազմակերպություն՝

**Հայ-Ռուսական (Սլավոնական)
համալսարան**

Պաշտպանությունը կայանալու է 2014թ.-ի հունիսի 5-ին ժամը 15³⁰-ին, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում գործող ՀՀ ԲՈՂ-ի 014 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք.Երևան, Նալբանդյան 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014թ. -ի մայիսի 5-ին:

014 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝
տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր



Ա.Լ. Ասլանյան

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Բանկային համակարգը շուկայական տնտեսությանը բնորոշ կարևորագույն ենթակառուցվածքներից է, որում ներառված առևտրային բանկերն իրականացնելով բազմաբնույթ գործառնություններ և դրանց համահունչ տարբեր հաճախորդներից ներգրավելով դրամական միջոցներ և միաժամանակ հանդիսանալով որպես միջնորդ կապիտալի վերաբաշխման գործում, էապես բարձրացնում են արտադրության ընդհանուր արդյունավետությունը: Մասնավորապես, վերջին տարիներին ՀՀ-ում զարգացող ապրանքային և ֆինանսական շուկաների պայմաններում, բանկային համակարգի կառուցվածքը նկատելիորեն բարդացել է, մեծացել է առևտրային բանկերի դերն ու ինքնուրույնությունը, ստեղծվել են ֆինանսավարկային կազմակերպությունների նոր տեսակներ, շարունակվում են բանկերի կողմից սպասարկման արդյունավետության աճի ուղիների որոնումները՝ ներքին և արտաքին տնտեսական կապերի բնագավառում, փորձեր են կատարվում լավագույն կերպով սահմանազատել մասնագիտացված ֆինանսական և բանկային հիմնարկությունների գործունեության ու գործառնությունների ոլորտը:

ՀՀ-ում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, սակայն դեռևս բացակայում են կատարյալ գործարար միջավայրն ու այնպիսի համապատասխան ենթակառուցվածքները, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել իրականացվող գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, իսկ հետագա տնտեսական աճի բարելավման հիմնական խոչընդոտը ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ և կենտրոնացված տնտեսական հենքով:

Ներկայումս Հայաստանի բանկային համակարգը գտնվում է իր զարգացման փուլում: Առողջ բանկային համակարգին հասնելն առաջին հերթին պայմանավորված է այդ համակարգի գործունեության իրավական կարգավորման, վերլուծության և գնահատման արդյունավետ մեթոդների ընտրությամբ և այն գործընթացների ճիշտ կազմակերպմամբ, որոնք իրականացվում են տնտեսական նորմատիվների, հաշվետվությունների, ինչպես նաև՝ գնահատման համակարգերի միջոցով:

Քանի որ յուրաքանչյուր առևտրային բանկի գործունեության զլխավոր նպատակը առավելագույն շահույթի ստացումն է և որի ածանցյալը՝ եկամտաբերությունն է, հակադարձ համեմատական է իրացվելիության ապահովմանը: Այսինքն՝ բանկի իրացվելիությունը կախված է նրա ակտիվների և պասիվների ընթացիկ հավասարակշռության մակարդակից, իսկ անհրաժեշտ իրացվելիությունն ապահովելու համար առևտրային բանկի ակտիվների կառուցվածքը պետք է համապատասխանի այդ իրացվելիության որակական պահանջներին:

Գործնականում բանկի իրացվելիությունը որոշվում է նրա հաշվեկշռի իրացվելիության գնահատման հիման վրա, իսկ բանկի հաշվեկշռը համարվում է իրացվելի, եթե ակտիվում արտացոլված միջոցները դրանց արագ իրացման հաշվին հնարավորություն են տալիս կատարել ժամկետային պար-

տավորություններն ըստ պասիվի: Յետևաբար, բանկի իրացվելիության մակարդակի վրա առաջին հերթին ազդում են հաշվեկշռի ակտիվների կառուցվածքը, ակտիվային գործառնությունների կազմն ու տեսակները և դրանց համահունչ՝ պարտավորություններով ապահովվածությունը: Ուստի ելնելով վերոնշյալներից, ատենախոսը կարևորել է բացահայտել առևտրային բանկերի ենթակայության տակ գտնվող ակտիվների և պասիվների փոխկապվածությունները, ներկայացնել դրանց բարելավման ուղիները, և որոնցով էլ պայմանավորվել է թեմայի արդիականությունն ու կատարման ակիրաժեշտությունը:

Յետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է արտերկրյա և հայրենական փորձի հիման վրա ներկայացնել ՀՀ առևտրային բանկերի ակտիվների և պասիվների փոխկապվածությունների տեսական և գործնական ուղղությունների բարելավումը: Նշված նպատակի իրականացման համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել Հայաստանի Յանրապետության բանկային համակարգն իր առանձնահատկություններով և վերլուծել բանկերի հիմնական հաշվեկշռային ցուցանիշները,
- բացահայտել առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշների փոխկապվածությունների ձևավորման գործոնները,
- կատարել առևտրային բանկերի ակտիվների, պարտավորությունների և ֆինանսական արդյունքների կառուցվածքային ու համեմատական վերլուծություն և ներկայացնել դրանց համահունչ առաջարկություններ,
- մշակել առևտրային բանկերի ակտիվների ու պասիվների փոխկապվածությունների ձևավորման նորովի մոտեցում՝ հիմնավորելով համապատասխան տնտեսագիտական մեկնաբանություններով,
- վերլուծել և գնահատել առևտրային բանկերի ակտիվների ու պասիվների իրացվելիությունը և ներկայացնել հիմնական ցուցանիշների փոխկապվածությունների բարելավման ուղիները:

Յետազոտության օբյեկտը և առարկան: Յետազոտության օբյեկտն է ՀՀ բանկային համակարգը, ինչպես նաև՝ ոլորտին առնչվող առևտրային բանկերի գործունեությանը նպաստող ակտիվների ու պասիվների փոխկապվածությունների կառավարման մեթոդների համախումբը, իսկ ուսումնասիրության առարկան՝ վերոնշյալներին վերաբերող հիմնախնդիրների լուծման ուղիները:

Յետազոտության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը: Յետազոտության մեջ օգտագործվել են թեմային առնչվող ՀՀ օրենքներ, օրենսդրական և նորմատիվային ակտեր, ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտներ, վիճակագրական և վերլուծական նյութեր, իրապարակումներ: Կատարված հետազոտության համար տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել բանկային համակարգի գործունեությանն առնչվող հիմնարար դրույթները, հայրենական և արտասահմանյան հեղինակների ուսումնասիրությունների արդյունքները:

Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը:

Ուսումնասիրության ընթացքում ստացվել են տեսական և գործնական նշանակություն ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից որպես գիտական նորույթ, հատկապես կարևորվել են ներքոնշյալները.

- վերլուծվել են ՀՀ առևտրային բանկերի հիմնական տնտեսական նորմատիվներն ըստ տարիների և դրանց արդյունքում առանձնացվել ու հիմնավորվել են կապիտալի համարժեքության և իրացվելիության նորմատիվների մեծությունները՝ որպես բանկային համակարգի հուսալիության ապահովմանը նպաստող ամենահիմնական գործոններ:
- կատարվել է առևտրային բանկերի ամփոփ հաշվեկշռի առանձին բաժինների (ակտիվներ, ընդհանուր կապիտալ, պարտավորություններ) ըստ դիսաբիլայի՝ կառուցվածքային, համեմատական վերլուծություններ խմբավորման մեթոդով, և տնտեսագիտական հիմնավորումներով առաջարկվել է իրականացնել բանկերի խոշորացում՝ միջազգային փորձին համահունչ:
- բացահայտվել են առևտրային բանկերը բնութագրող ամփոփ ցուցանիշների (իրացվելիություն, վճարունակություն, ակնկալվող շահույթ) փոխկապվածությունների մեխանիզմները և այդ համատեքստում առաջարկվել են դրանց նպաստող ներքին ու արտաքին գործոնների համախումբ:
- բացահայտվել ու հիմնավորվել են ՀՀ առևտրային բանկերի այն հիմնական ցուցանիշները, որոնց փոխհարաբերակցություններով պայմանավորված մշակվել և առաջարկվել է ակտիվների ու պասիվների գնահատման նորովի մոտեցում, որպես արդյունքային ցուցանիշ ընտրելով բանկի ընդ-հանուր կապիտալի բազմարկիչը:

Հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը: Հետազոտությունում տեղ են գտել ինչպես տեսամեթոդական, այնպես էլ՝ թեմայի բովանդակությանը համահունչ այնպիսի վերլուծություններ, որոնք կարող են օգտակար լինել ինչպես բանկերի և վարկային կազմակերպությունների, այնպես էլ՝ դիտարկվող ոլորտում հարաբերությունները կանոնակարգող պետական մարմինների, գիտահետազոտական աշխատանքներ իրականացնող հիմնարկությունների և այլ շահագրգիռ անձանց համար:

Հետազոտության գործնական նշանակությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ մշակվել և հաշվարկվել են նոր մոտեցումներ՝ կապված բանկերի ակտիվների և պասիվների փոխկապվածությունների բացահայտման և դրանց արդյունավետ կառավարման հետ:

Հետազոտության արդյունքների փորձաքննությունը և հրապարակումները: Ատենախոսությունը քննարկվել և հավանության է արժանացել Հայաստանի ազգային ազրարային համալսարանի ,Ֆինանսներ և վարկե ամբիոնում, իսկ որոշ դրույթներ իրենց արտացոլումն են ստացել հեղինակի վեց գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը շարադրված է 116 էջի վրա (առանց հավելվածների), բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից և ներառում է 27 աղյուսակ ու 10 գծապատկեր

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության «Ներածություն»-ում հիմնավորվել է թեմայի արդիակախությունը, պարզաբանվել են հետազոտության օբյեկտն ու առարկան, հիմնական նպատակն ու խնդիրները, ներկայացվել է աշխատանքի կառուցվածքը, տեսական և մեթոդական հիմքերը, հետազոտության գիտական նորույթն ու դրա գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «ՀՀ բանկային համակարգը և ամփոփ ցուցանիշների փոխկապվածությունների ձևավորման գործոնները», **գլխում** ներկայացվել են ՀՀ բանկային համակարգը և դրա աստիճանական զարգացման պատմական առանձնահատկությունները, բանկային համակարգի հուսալիության ապահովման նախապայմանները, ինչպես նաև՝ առևտրային բանկերի որոշ ամփոփ ցուցանիշների փոխկապվածություններն ու դրանց ձևավորման գործոնները:

Ավսիայտ է, որ բանկը մարդկության մտքի մեծագույն նվաճումներից մեկն է, որն իրենից ներկայացնում է տնտեսվարող սուբյեկտների մի մասնիկը և տնտեսության կարևորագույն օղակներից մեկը, առանց որի անհնարին է պատկերացնել ժամանակակից դրամավարկային համակարգը: Բանկային գործն իր էությանմբ պայմանավորված է նաև տնտեսության մեջ ապրանքադրամային հարաբերությունների կարգավորման մակարդակով, որը ծագել և զարգացել է միջոցների փոխանակման ու փոխատվական գործունեության շնորհիվ¹: Բանկը ներգրավում է ազատ դրամական միջոցներ՝ ավանդների ու դեպոզիտների տեսքով, տրամադրում է տարբեր տեսակի վարկեր դրա կարիքը զգացողներին (վարկառուներին, փոխառուներին) և կատարում է բազմատեսակ գործառնություններ ու ծառայություններ²:

Բանկային համակարգն այս կամ այն երկրում³ պատմականորեն ձևավորված և օրենսդրորեն ամրագրված տարբեր տեսակի փոխկապված բանկերի ու վարկային կազմակերպությունների ամբողջությունն է, որոնք գործում են միասնական ֆինանսավարկային համակարգի շրջանակներում: Բանկային համակարգը երկրի ֆինանսական համակարգի բաղկացուցիչ մասն է և նրա հանգուցային օղակը:

Բանկային համակարգի հուսալիության ապահովման համար կարևոր նշանակություն ունի ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանվող հիմնական տնտեսական նորմատիվների⁴ պահպանումը: Դրանցից որոշների գծով՝ ըստ 2000-2012թթ-երի տվյալների, հաշվարկել և ներկայացրել ենք ՀՀ առևտրային բանկերի համար, մասնավորապես կապված կապիտալի համարժեքության և իրացվելիության նորմատիվների մեծությունների հետ, այդ թվում՝

- բարձր իրացվելի ակտիվների և ցայահանջ պարտավորությունների հարաբերակցությունը (U^2),


¹ Բաբայան Վ. Բանկային գործի հիմունքներ, -Եր.: 2003, էջ 55:

² Բայադյան Ա. Ֆինանսա-վիճակագրական բացատրական բառարան, -Եր.: 2008, էջ 73:

³ «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» Կանոնակարգ 2-ը հաստատելու մասին ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 39-Ն առ 09.02.2007թ. որոշում:

⁴ «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» Կանոնակարգ 2-ը հաստատելու մասին ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 39-Ն առ 09.02.2007թ. որոշում

- բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների հարաբերակցությունը (Ն²),
 - ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցությունը:
- Ավելի հստակ պատկերացում ունենալու համար վերոնշյալ նորմատիվներից յուրաքանչյուրի գծով կազմել ենք գծապատկեր 1-ը:



Գծապատկեր 1. Առևտրային բանկերի կապիտալի համարժեքության և իրացվելիության նորմատիվների փոփոխության դինամիկան 2000-2012թթ. -ին

Յտուկապես դրանցից Ն²-ը ունեցել է ըստ տարիների վարիացիայի բավականաչափ մեծ թափ՝ կազմելով 40% (126.1-86.1), որը բանկային համակարգի համար համարվում է դրական երևույթ:

Այստեղից հետևություն, որ յուրաքանչյուր բանկի հուսալիության ասպեկտի վրա համար որպես առաջնահերթ նախապայման, դա տևտեսական նորմատիվների հաշվարկումն է՝ սահմանվածներին համահունչ:

Առևտրային բանկերի արդյունավետ գործունեության համար կարևորվում են ոչ միայն ընդհանուր ակտիվների, պարտավորությունների և կապիտալի մեծությունները, այլ նաև՝ դրանցով պայմանավորված առանձին ամփոփ ցուցանիշներն ու դրանց միջև գործող փոխկապվածությունները: Այդ ցուցանիշների թվին են դասվում նաև բանկերի համար կարևորագույն նշանակություն ունեցող իրացվելիությունը, վճարունակությունը և սպասվելիք շահույթի մեծությունները: Մասնավորապես, վերջինիս ավելացումներն ու նվազեցումներն ըստ տարիների, պայմանավորված են նաև բանկի իրացվելիությամբ և վճարունակությամբ:

Բանկի իրացվելիության գործոնները ստորաբաժանվում են երկու խմբի՝ արտաքին և ներքին՝ որոնք ամփոփ տեսքով ներկայացված են աղյուսակ 1-ում:

⁵ Банковское дело. Под. Ред. Г.Н. Бологязовой -М. 2003, стр. 160-165


Բանկի վճարունակությունն ու իրացվելիությունը բնորոշող գործոնների համախումբը

Վճարունակության գործոններ		Բանկի իրացվելիության վճարունակության հիմքը				
ատաղին	ներքին	արտաքին	ներքին	հաշվեչափի իրացվելիության գործոններ	ա կտիվների իրացվելիություն	պարտավորությունների իրացվելիություն
<ul style="list-style-type: none"> - երկուսն էլ տարածաշրջանակներում(արգելադրում) ստիպաման դրու-թյունը և տնտեսական քարտեզագրությունը, - ֆինանսական շուկայի և բանկային համա-կարգի կայունությունն ու զարգացման մա-կարողակը, - պետության դրամավար-կային և հարկային քաղաքականությունը, - բանկային հսկողու-թյուն ստրատեգիային պահանջները, - ֆինանսական շուկա-ներում առաջարկի և պահանջարկի իրա-դրությունը, - օրենսդրության կատա-րելագործումը բանկի համաբազ (վարկանի-շք)։ 	<ul style="list-style-type: none"> - բանկի սեփա-կան կապիտալի թափափարվածու-թյունը, - բանկի իրացվե-լիության կորստի ռիսկը, - բաժնետոմսերի փոխառության տոմսերի և այլ երկարաժամկետ գործիքների հնարավոր թո-րափոխումների ռազմավարական կա-նխագծման կա-նխադրումների առկայությունը 	<ul style="list-style-type: none"> - վարկային միջոց-ների պահանքի տա-տանան յսպիսա-տեսված եղությունն ու սեզոնայություն-ը - բանկերի գործընկե-րների և հաճա-խորդների հուսալի-ությունը, - կապիտալի չուկա մտնելու հնարավոր-ությունը: 	<ul style="list-style-type: none"> - բանկի ֆինան-սական միջոցների շարքի կանխատե-լումների արդյունա-վետությունը, - միջոցների ներդրա-վան և տեղաբաշ-խման կենտրոնա-ցման վակարողակը, - բանկի կարողի-րացվելիությունը, - բանկային ծառայու-թյունների քազմա-զանությունն ու մտնածադիտարումը, - բանկի պայմանագ-րային պարտավոր-ությունների կա-տարման ծավալն ու կարողակը 	<ul style="list-style-type: none"> - բանկի հաշվեչափի սովորների և պա-րազեռությունն ըստ ծավալի ու կառուցվածքի, - պարտավորու-թյուն աստիճանի ակ-տիվների կառուց-վածքը, - դրամական միջոց-ների վերադարձից եկամուտների ստացման ժամանակացույցը: 	<ul style="list-style-type: none"> - դրամական մի-ջոցների ակտիվ-ների փոխարկելի-ությունը կորուստ-ները և ժամկե-տները, - ըստ իրացվելիու-թյան աստիճանի և ժամկետների ակ-տիվների կառուց-վածքը, - դրամական միջոց-ների վերադարձից եկամուտների ստացման ժամանակացույցը: 	<ul style="list-style-type: none"> - նոր տեսանկյ արի-տավորությունն-րում փոխարկելի-վոր պարտավորու-թյան ունակու-թյունը, - պարտավորությու-ների կառուցված-քն ըստ ժամկետ-ների տեսակների և պարամետրների (կոնտրակ-տներին), - դրամական միջոց-ների վերադարձ-ման և հաշվեչափ-կան տրվածների վճարման ժամա-նակացույցը:

* Այլուսակը կազմված է եղելիակի կողմից

Բանկի իրացվելիության և վճարունակության փոխկապվածությունից բացի կարևորվում է նաև իրացվելիության փոխկապվածությունը բանկի շահույթի հետ, որոնք բնութագրվում են հետևյալ ազդող գործոններով⁶:

Դրանց թվին են դասվում՝ միջոցների կազմավորման աղբյուրների կայունությունը և կառուցվածքը, իրացվելիության ընդհանուր պահուստները (սկզբնական ու երկրորդական), բանկերի ունեցվածքում անշարժ չօգտագործվող միջոցների ծավալը, վարկային ու ներդրումային կարողությունը և շահույթի (վնաս) մեծությունը: Ավելի հստակ ու հասկանալի դառնալու համար վերոնշյալները ամփոփ ներկայացնենք հետևյալ գծապատկեր 2-ով:



2. Բանկի շահույթի (վնասի) և իրացվելիության փոխկապվածությունը

Այստեղից հետևություն, որ բանկի արդյունավետ գործունեության համար կարևորվում են նաև իրացվելիության, վճարունակության և սպասվելիք շահույթի փոխկապվածությունների բացահայտումը:

Առենախոսության երկրորդ՝ «Առևտրային բանկերի ակտիվների և պասիվների ելությունը և դրանց վերլուծության մոտեցումները» գլխում պարզաբանված են առևտրային բանկերի ակտիվների և պասիվների ելությունն ու դրանց նշանակությունը, կառուցվածքային, համեմատական և խմբավորման մեթոդներով ակտիվների և պարտավորությունների, ինչպես նաև՝ ֆինանսական արդյունքների, փոփոխությունների վերլուծությունը:

Ինչպես ցանկացած տնտեսվարող սուբյեկտ, այդ թվում նաև առևտրային բանկերն իրենց գործունեությունը կարգավորելու համար անհրաժեշտ ռեսուրսները հավաքագրում են հիմնականում ի հաշիվ սեփական (ընդհանուր) կապիտալի և ներգրաված պարտավորությունների: Ուստի այդ ամումով պասիվների ձևավորման խնդիրն ունի առաջնային նշանակություն, որը պայմանավորված է շուկայական տնտեսությանը բնորոշ առանձնահատ-

կուրսություններով: Միաժամանակ, առևտրային բանկերի գործունեության ծավալներն անմիջականորեն կախված են ռեսուրսների ծավալներից: Յուրաքանչյուր բանկի պասիվային միջոցներն ըստ ձևավորման բնույթի հանդես են գալիս երկու խումբ գործառնությունների հիման վրա և արդյունքում էլ ձևավորվում են նրա սեփական կապիտալը, ներգրավված և փոխառու միջոցները կամ այլ պարտավորությունները: Ընդհանուր առմամբ, պետք է նշել նաև այն իրողությունը, որ ի տարբերություն մնացած տնտեսվարող սուբյեկտների, առևտրային բանկերի ենթակայության ակտիվները տարբերվում են իրենց կազմով ու առանձնահատկություններով:

Ելնելով վերոնշյալներից՝ ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր ակտիվների կառուցվածքային և համեմատական փոփոխությունների վերաբերյալ ավելի հստակ պատկերացում ունենալու համար ներկայացվել են դրանց համահունչ ամփոփ տվյալները՝ ըստ 2007-2012 թթ-երի⁷:

Ակտիվների վերլուծության առումով կարևորվում է ըստ դրանց խմբավորման մեթոդի կիրառումը, որի իրականացման համար օգտագործվում է վիճակագրության ընդհանուր տեսությունից հայտնի հետևյալ հավասարումը՝

$$n = 1 + 3.322 \lg N \quad (1)$$

Վերլուծության առումով միաժամանակ կարևորվում է յուրաքանչյուր խմբի միջակայքի որոշումը, որն արտահայտում է հետևյալ բանաձևով.

$$h = X_{\max} - X_{\min} / n \quad (2)$$

$X_{\max} - X_{\min}$ -ը ուսումնասիրվող շարքի (ակտիվների) մեծագույն ու փոքրագույն արժեքների տարբերությունն է, որն ըստ բանաձևի հաշվարկի, հավասար է 20 միավորի (2007 թվականի տվյալներով):

Հիմք ընդունելով n -ի, h -ի մեծությունները և ատենախոսությունում ներկայացված աղյուսակ 2.2.2-ի էլակետային տվյալները, կազմվել է աղյուսակ 2-ը՝ խմբավորման մեթոդով:

Աղյուսակ 2-ի տվյալներից պարզվում է, որ ըստ տարիների մինչև 20 մլրդ դրամ ակտիվներ ունեցող առևտրային բանկերի թվաքանակը նվազման միտում է ունեցել, և արդյունքում 2007 թ.-ի 8 բանկերի փոխարեն 2012 թ.-ի վերջի դրությամբ դրանց թիվը հասել է 2-ի: Դրանք են՝ «ԲՏԱ ինվեստբանկ» և «Մելլաթբանկ» ՓԲԸ-երը, իսկ ահա 80 մլրդ դրամ և ավելի ակտիվների դեպքում տեղի է ունեցել աճման միտում՝ 2007 թ.-ի 3 բանկերի փոխարեն դարձել են 12 բանկեր, որը դրական երևույթ է, քանի որ խոշոր առևտրային բանկերն ավելի շատ կարող են դիմակայել ֆինանսատնտեսական ճգնաժամերին, քան ավելի պակաս ակտիվներ ունեցող բանկերը:

Կարևորվում են նաև բանկերի ենթակայության տակ գտնվող ակտիվների և դրանց համահունչ պասիվների բավարար չափով լինելը, իսկ պասիվներում էլ առանձնանում են բանկերի պարտավորությունները, որոնց հիմնական մասը կազմում են ավանդները: Ելնելով դրանց կարևորությունից, պետք է նշել, որ արդեն ձևավորված պարտավորությունների արդյունավետ կառավարումն իր ազդեցությունն է թողնում բանկի իրացվելիության ու սպասվելիք եկամտաբերության մակարդակի վրա:

Այդ իսկ պատճառով էլ բանկի ֆինանսների կարգավորման գործընթացում խիստ կարևորվում է պարտավորությունների արդյունավետ կառա-

⁷ ՀՀ կենտրոնական բանկի տարեկան հաշվետվություններ (2007-2012թթ.):

ԳԳ առևտրային բանկերի համեմատական վերլուծությունը՝ ըստ պարտավորությունների խմբավորումների (2007-2012թթ.)

h/h	Արջև-արձր դիվիզիոն-այլ	2007թ.			2008թ.			2009թ.			2010թ.			2011թ.			2012թ.		
		Ցուրք վճարվող հարկեր	ԱՆՆԱԿ ՎՃԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ	ԱՆՆԱԿ ՎՃԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ	Ցուրք վճարվող հարկեր	ԱՆՆԱԿ ՎՃԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ	ԱՆՆԱԿ ՎՃԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ	Ցուրք վճարվող հարկեր	ԱՆՆԱԿ ՎՃԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ	ԱՆՆԱԿ ՎՃԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ	Ցուրք վճարվող հարկեր	ԱՆՆԱԿ ՎՃԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ	ԱՆՆԱԿ ՎՃԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ	Ցուրք վճարվող հարկեր	ԱՆՆԱԿ ՎՃԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ	ԱՆՆԱԿ ՎՃԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ	Ցուրք վճարվող հարկեր	ԱՆՆԱԿ ՎՃԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ	
1.	մինչև 20		107.12	9.74	8	68.49	6.56	7	69.47	9.93	4	54.81	13.73	2	20.04	10.02	2	12.30	6.15
2.	20- 40	5	144.52	28.90	7	202.39	28.91	6	189.32	31.55	3	71.29	23.76	5	142.42	28.48	3	110.58	36.86
3.	40- 60	4	198.18	49.55	3	159.61	53.20	1	44.08	44.08	6	280.66	46.78	3	186.41	55.47	4	190.54	47.63
4.	60- 80	1	75.18	75.18	1	75.39	75.39	2	144.02	72.01	1	73.25	73.25	2	149.26	74.83	1	75.26	75.26
5.	80-ից բարձր	3	93.84	93.84	3	291.97	97.33	6	612.41	102.07	6	757.62	108.23	9	1220.83	135.65	11	1633.97	148.54
Ընդամենը		22	618.82	28.13	22	797.86	36.27	22	105.30	48.15	21	1237.72	58.94	21	1698.95	80.90	21	2022.66	95.37

վարման հիմնախնդիրը, որին հասնելու համար անհրաժեշտ է տարանջատել տվյալ բանկի պարտավորություններն՝ ըստ դրանց ներգրավման բնույթի, ցպահանջ և ժամկետային առումներով⁸: Տարանջատելով բանկի պարտավորություններն՝ ըստ ներգրավման աղբյուրների, կարող ենք հետևություն անել դրանց կառավարման գործընթացում բանկի վարած քաղաքականության, ֆինանսական շուկայում՝ որպես միջնորդի նրա կայացման, տնտեսության ակտիվության և բանկի իրացվելիության վերաբերյալ: Միաժամանակ, եթե բանկի պարտավորությունների կազմում գերակշռում են բանկերից ներգրաված դրամական միջոցները, ապա կարելի է եզրակացնել, որ բանկը կանգնած է լուրջ հիմնախնդիրների առջև, այսինքն՝ նա կորցրել է իր հիմնական հաճախորդների վստահությունը: Այնուհետև, եթե բանկի պարտավորությունների կազմում գերակշռում են ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրաված միջոցները, ապա կարելի է հանգել նրան, որ բանկը կարողացել է ստանձնել ազատ միջոցներ ներգրավողի իր գործընթացը: Արդյունքում, ներգրաված միջոցների ծավալը վկայում է ակտիվության, խնայողությունների մակարդակի, բանկերի նկատմամբ բնակչության վստահության մասին:

Հիմք ընդունելով խմբերի, միջակայքերի մեծությունները և համապատասխան տվյալները, կազմվել է աղյուսակ 3-ը: Աղյուսակից պարզվում է, որ ըստ ուսումնասիրվող տարիների, 2007թ.-ին գործող 22 առևտրային բանկերից մինչև 20 մլրդ դրամ պարտավորություններ ունեցող բանկերի թիվը 11-ն է, իսկ 80 մլրդ դրամից բարձր ունեցողը ընդամենը մեկն է՝ «Էյչ-Ես-Բի-Սի բանկ Յայաստան» ՓԲԸ-ը: Միաժամանակ, ըստ աղյուսակի ակնհայտ է, որ 2012 թ.-ի վերջում տեղի է ունեցել հակառակ գործընթացը, որի արդյունքում մինչև 20 մլրդ դրամ պարտավորություն ունեցող բանկերի թիվը նվազել է՝ հասնելով 2-ի («ԲՏԱ ինվեստ բանկ» և «Սեյլաթբանկ Յայաստան» ՓԲԸ-երը), իսկ 80 մլրդ դրամ և ավելի պարտավորություններ ունեցող առևտրային բանկերի թիվն արդեն 11-ն է, որոնցից հատկապես բարձր վարկանիշ ունեն՝ «Ամերիաբանկ», «Ակբա-կրեդիտ-ագրիկոլ բանկ», «Յայիզնեսթբանկ», «Էյչ-Ես-Բի-Սի բանկ Յայաստան», «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-երը:

Այսպիսով, վերլուծությունների արդյունքում գալիս ենք այնպիսի հետևության, որ առևտրային բանկերի խոշորացումն ըստ պարտավորությունների՝ դա բավականաչափ դրական և հուսալի երևույթ է, քանի որ ակտիվներին համահունչ ավելանում է ավանդատու հանդիսացող հաճախորդների թվաքանակը:

Չափի առնելով այն իրողությունը, որ բանկերի ֆինանսական ցուցանիշների վերջնական արդյունքը զուտ շահույթի մեծությունն է, ուսումնասիրվող տարիների՝ 2004-2012թթ-երի կտրվածքով կազմել ենք աղյուսակ 4-ը, որտեղ բնութագրել ենք դրա դինամիկ փոփոխությունները՝ հաշվարկելով բացարձակ հավելածը, աճի տեմպը, հավելածի տեմպի 1%-ի բացարձակ նշանակությունը, աճի և հավելածի միջին տեմպերը:

Սույն աղյուսակից ակնհայտ է դառնում, որ հարկումից հետո զուտ շահույթի գծով 2004թ.-ի բազիսային եղանակով հաշվարկված, բացարձակ հավելածերը նվազման միտում են ունեցել 2005, 2006 և 2009թթ.-ին, համապատասխանաբար կազմելով՝ 5178, 285 և 8748 մլն դրամ, իսկ շղթայական

⁸ Ասրյան Գ. Բանկի կառավարման հիմունքներ, -Եր.: 2003, էջ 137:

եղանակով՝ նվազման միտում է գրանցվել 2005 և 2009թթ.-ին: Հավելածի տեմպը, որը նույնպես հաշվարկված է երկու եղանակով՝ ամենաբարձրն է եղել 2011թ.-ին՝ համապատասխանաբար կազմելով 93.4% և 294.6%: Իսկ ուսումնասիրվող ինը տարիների գծով հաշվարկված զուտ շահույթի աճի միջին տեմպը կազմել է 112.0%, կամ այլ կերպ՝ հավելածի միջին տեմպը կազմել է 12.0%:

Աղյուսակ 4

ՀՀ առևտրային բանկերի զուտ շահույթի (հարկումից հետո) դիևամիկայի ցուցանիշների փոփոխություններն ըստ 2004-2012թթ.-ի

Դիևամիկայի ցուցանիշները	2004թ.	2005թ.	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.
Ա	1	2	3	4	5	6	7	8	9
Զուտ շահույթ հարկումից հետո, մլն դրամ	17156	11978	16871	20848	26868	8408	30205	33180	42471
Բացարձակ հավելած, մլն. դրամ,	0	-5178	-285	3692	9712	-8748	13049	16024	25315
ա) բազիսային եղանակով	0	-5178	4893	3977	6020	-18460	2197	2975	9291
բ) շրթայական եղանակով	100.0	69.8	98.3	12.5	156.6	49.0	176.1	193.4	247.6
ա) բազիսային եղանակով	100.0	-69.8	140.8	123.6	128.9	31.3	359.2	394.6	128.0
բ) շրթայական եղանակով	0	-30.2	-1.7	21.5	56.6	-51.0	76.1	93.4	147.6
ա) շրթայական եղանակով	0	-30.2	40.8	23.6	28.9	68.7	259.2	294.6	28.0
բ) բազիսային եղանակով	0	171.56	119.56	168.76	208.48	268.68	84.08	302.05	42.471
Աճի միջին տեմպ, %	$T_{\text{առ.}} = \sqrt[9]{42471/17156} = \sqrt[9]{2.4756} = 1.12$ կամ 112.0% $T_{\text{ն.ա}} = (112.0 - 100.0) = 12\%$								
Հավելածի միջին տեմպ, %									
Աճի միջին տեմպ, %									
Հավելածի միջին տեմպ, %									

Առևտրային բանկերի համար, բացի հարկումից հետո զուտ շահույթի կաուցվածքային և ըստ դիևամիկայի վերլուծություններից կարևորվում է նաև դրա անալիտիկ հարթեցումը, որն արտահայտված է հետևյալ հավասարման տեսքով⁹:

$$Y_t = a_0 + a_1 t \quad (3)$$

որտեղ՝ Y_t -ն՝ ուսումնասիրվող տարիներում հարկումից հետո զուտ շահույթի գումարի չափն է,
 t -ն՝ ուսումնասիրվող տարիներն են,

⁹ Պետրոսյան Ա. Հ., Վիճակագրության ընդհանուր տեսություն, -Եր.: 2010, էջ 125-127.

a_0 և a_1 -ը՝ հավասարման գործակիցներն են, որոնք ենթակա են որոշման:
 Հարկումից հետո զուտ շահույթի անալիտիկ հարթեցման համար կազմվել է
 աղյուսակ 5-ը՝ ըստ 2002-2012թթ.-երի տվյալների:

Աղյուսակ 5

**Չուտ շահույթի (հարկումից հետո) անալիտիկ հարթեցումը՝
 ըստ 2002-2012թթ.***

մլն. դրամ


	Չուտ շահույթ հարկումից հետո, (y)		yt	t ²	Y _{հաշվ.}	Ծեղումը (+, -)	
						Բացարձակ Y _{հաշվ.} - Y _{փաստ.}	Հարաբ., %
2002թ.	4.763	5	23.815	25	4.608	-0.15	-3.3
2003թ.	6.516	4	26.064	16	7.763	1.157	17.8
2004թ.	17.156	3	51.468	9	10.738	-6.418	-37.4
2005թ.	11.978	2	23.956	4	13.803	-1.825	15.2
2006թ.	16.870	1	16.870	1	16.868	-0.002	-0.01
2007թ.	20.848	0	0	0	19.933	-0.915	-4.4
2008թ.	26.868	-1	-26.868	1	22.998	-3.870	-14.4
2009թ.	8.408	-2	-16.816	4	26.063	17.655	310.0
2010թ.	30.205	-03	-90.615	9	29.128	-1.077	-3.6
2011թ.	33.179	-4	-132.716	16	32.193	-0.986	-3.0
2012թ.	42.471	-5	-212.355	25	35.258	-7.213	-17.0
Σ	219.262	0	-337.197	110	219.262	0.0	

* Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից:

Լուծման վերջնական արդյունքում ստացվել է.

$$Y_t = 19.933 - 3.065t \quad (4)$$

Պարզվում է, որ ըստ տարիների ամենամեծ շեղումներ սկստվել են
 2004թ.-ին(-6.418 մլն. դրամ կամ 37.4%) և 2008թ.-ին(17.655 մլն. դրամ կամ



310.0%):

Գծապատկեր 3. ՀՀ առևտրային բանկերի զուտ շահույթի (հարկումից հետո) անալիտիկ հարթեցումն՝ ըստ 2002-2012թթ.*


Սրանք արդյունք են այն հանգամանքի, որ ուսումնասիրվող տարիների զուտ շահույթն ունեցել է աճման և նվազման միտում (մասնավորապես 2008թ.-ին), այսինքն՝ այդ դիսամիկ շարքը ոչ գծային է: Ավելի պարզ պատկերացում ունենալու համար կազմվել է զուտ շահույթի (հարկումից հետո) անալիտիկ հարթեցման գծապատկերը:

Ստենախոսության երրորդ՝ 33 առևտրային բանկերի ակտիվների ու պասիվների իրացվելիությունը և դրանց գնահատման բարելավման ուղիները, գլխում ներկայացված են առևտրային բանկերի ակտիվների և պարտավորությունների իրացվելիության ելությունն ու դրանց վերլուծության կարևորությունը, ինչպես նաև՝ բանկերի ակտիվների և պասիվների գնահատման բարելավման ուղիները, ըստ հիմնական ցուցանիշների փոխհարաբերակցությունների:

Առևտրային բանկի գործունեության գլխավոր նպատակն առաջին հերթին առավելագույն շահույթի ստացումն է, որի հիմքում ընկած է ակտիվների և պարտավորությունների իրացվելիության ապահովումը¹⁰:

Բանկի իրացվելիությունը՝ նրա ամենօրյա ընդունակությունն է՝ ժամանակին և առանց կորուստների կատարելու իր պարտավորությունների և ավանդատուների ու պարտատերերի հանդեպ: Բանկն իրացվելի է, եթե նրա իրացվելի ակտիվների գումարը և այն իրացվելի միջոցները, որոնք նա կարող է արագ հավաքագրել՝ այլ աղբյուրներից, բավարար են նրա ընթացիկ պարտավորությունները ժամանակին մարելու համար:

Իրացվելիություն ապահովող բանկի համար մատչելի են համարվում այն միջոցները, որոնք նա կարող է ներգրավել հաճախորդներից հարմարավետ զեղծ և հենց այն պահին, երբ դրանք անհրաժեշտ են արդյունավետ գործունեություն ծավալելու համար¹¹:



Գծապատկեր 4. Բանկի վճարունակության մակարդակի վրա ազդող ներքին գործոններ

* Գծապատկերը կազմված է հեղինակի կողմից:


¹⁰ Кунинский В.А., Ипичин А.С. Система Управления ресурсами банка. -М.: 2000, стр. 170.

¹¹ Предтеченский А.Н., Коэффициентный анализ в системе кредитных рейтингов заемщиков банка. Банковское дело, 2005, N4,5, стр. 42-47.

Բանկի վճարունակության մակարդակի վրա ազդող ներքին և արտաքին գործոնները խմբավորված են գծապատկեր 4-ում և 5-ում¹²:

Վերը թվարկված գործոններից որոշիչ նշանակություն ունի առաջինը: Միայն այն բանկերը, որոնք ունեն բավականաչափ կապիտալ վնասները հատուցելու համար (եթե դրա համար ընթացիկ եկամուտները չեն բավարարի) ի վիճակի են անբարենպաստ հանգամանքների դեպքում կատարել իրենց պարտավորությունները ավանդատուների և պարտատերերի հանդեպ: Հենց դրա համար էլ բանկը համարվում է վճարունակ, քանի դեռ ձեռք չի տվել սեփական կապիտալին (գծապատկեր 5):

Երկրում ընդհանուր քաղաքական և տնտեսական իրավիճակը ստեղծում է բանկային գործառնությունների զարգացման և բանկային համակարգի հաջող գործունեության նախադրյալներ, ապահովում բանկերի գործունեության տնտեսական կայունությունը, ամրապնդում հայրենական և օտարերկրյա ներդրողների վստահությունը բանկերի նկատմամբ:



Գծապատկեր 5. Բանկի վճարունակության մակարդակի վրա ազդող արտաքին գործոններ

Բանկերի գործունեության վերլուծության ժամանակ կարևոր նշանակություն է ստանում հիմնական ցուցանիշների տարանջատումն՝ ըստ ազդող գործոնների և յուրաքանչյուր գործոնի ազդեցության չափի: Օրինակ՝ դժվար չէ նկատել, որ շահութաբերության ամենակարևոր ու հաճախ կիրառելի ցուցանիշներից *ROA*-ն և *ROE*-ն գտնվում են սերտ կապի մեջ: Երկուսն էլ ունեն նույն համարիչը՝ զուտ շահույթը հարկումից հետո, որի հիման վրա էլ այդ հարաբերական ցուցանիշներից մեկը կարելի է արտահայտել մյուսով¹³

$$ROE = ROA \times \frac{U}{ԸԿ} \quad (5)$$

¹² Вешкин Ю.Г., Авагян Г.Л., Банковские системы зарубежных стран. Курс лекций. -М.: Экономист, 2004, стр. 174-178.

¹³ Բայադյան Ա.Յ., Առևտրային բանկերի շահութաբերության ցուցանիշների համակարգը և գործոնային վերլուծությունը (մեթոդական ցուցումներ), Եր.: 2004, էջ 19-20:

որտեղ Ա-ն՝ ակտիվներն են,
ԸԿ-ն՝ բանկի ընդհանուր կապիտալը:

Փաստորեն *ROE*-ի և *ROA*-ի միջև հարաբերակցությունն արտացոլում է բանկի ղեկավարների առջև մշտապես ծագող ռիսկայնության բավարար մակարդակի և շահութաբերության միջև ցանկալի հարաբերակցության ապահովման խնդիրը:

Վերջիններս իմաստավորելու համար կազմենք բանկի ակտիվների, ընդհանուր կապիտալի և եկամտաբերությունն արտացոլող աղյուսակ 6-ը, որը հնարավորություն կտա գնահատել, թե տվյալ բանկի կողմից սեփական և ներգրաված միջոցների ինչպիսի հարաբերակցություն է պահանջվում:

Աղյուսակ 6

33 առևտրային բանկերի հիմնական ցուցանիշների փոխկապակցությունների հարաբերակցությունները

Հարաբերակցության անվանումը			Ընդհանուր ակտիվների շահութաբերությունը(ROA) %			
			0,5	1,0	1,5	2,0
Ընդհանուր ակտիվների և ընդհանուր կապիտալի հարաբերակցությունը (բանկի բազմարկիչ)	Խմբի հ/հ		այդ դեպքում(ROE)-ն պետք է լինի, %			
	1-ին	2,5:1	1,25	2,5	3,75	5,0
	2-րդ	5:1	2,5	5,0	7,5	10,0
	3-րդ	7,5:1	3,75	7,5	11,25	15,0
	4-րդ	10:1	5,0	10,0	15,0	20,0
	5-րդ	12,5:1	6,25	12,5	18,75	25,0
	6-րդ	15:1	7,5	15,0	22,5	30,0
	7-րդ	17,5:1	8,75	17,5	26,25	35,0
	8-րդ	20:1	10,0	20,0	30,0	40,0

* Աղյուսակը կազմված է հեղինակի կողմից

Աղյուսակ 6-ից երևում է, որ այն բանկը, որի ակտիվների և ընդհանուր կապիտալի հարաբերակցությունը, օրինակ, գտնվում է 5-ից 1-ի սահմաններում, կարող է 0,5% *ROA*-ի պայմաններում ակնկալել 2,5% *ROE*, իսկ 2% *ROA*-ի պայմաններում՝ 10% *ROE*: Հետևաբար, *ROA*-ի իջեցմանը գուզընթաց, բանկը պետք է կրի բարձր ռիսկայնություն՝ ակտիվների և ընդհանուր կապիտալի հարաբերակցության տեսքով, որպեսզի հնարավոր լինի ապահովել եկամտաբերության նույն մակարդակը:

Հիմք ընդունելով վերոնշյալ աղյուսակում ամփոփված տվյալները, պետք է նշել, որ յուրաքանչյուր բանկի համար կարևորվում է բազմարկիչի (մուլտիպլիկատորի) մեծությունը (ակտիվների և ընդհանուր կապիտալի հարաբերակցությունը), որը կախված է մի շարք հարաբերակցություններից.

- մեկ միավոր գուտ շահույթին (հարկումից հետո) բաժին ընկնող ակտիվները ($W/2C$),
- կանոնադրական կապիտալի մեկ միավորին բաժին ընկնող գուտ շահույթի (հարկումից հետո) գումարի չափը ($23/44$),
- պարտավորությունների մեկ միավորին հասանելիք կանոնադրական կապիտալի գումարի չափը ($7/44$),

- պարտավորությունների և վարկային ներդրումների հարաբերակցությունը (Պ/ՎՆ),
- վարկային ներդրումների և ընդհանուր կապիտալի հարաբերակցությունը (ՎՆ/ԸԿ):

Վերոնշյալ հարաբերակցություններն իմաստավորելու համար կազմենք հավասարում 6-ը՝

$$\frac{(y)}{\text{ԸԿ}} = \frac{(1)}{\text{ՁԸ}} \times \frac{(2)}{\text{ԿԿ}} \times \frac{(3)}{\text{Պ}} \times \frac{(4)}{\text{ՎՆ}} \times \frac{(5)}{\text{ԸԿ}} \quad (6)$$

Մեր կողմից հատկապես կարևորել ենք 4-րդ և 5-րդ հարաբերակցությունների ներառումը հավասարման մեջ, քանի որ վարկային ներդրումների մեծությունը հիմնականում պայմանավորված է ներգրաված պարտավորություններով: Արդյունքում, ընդհանուր կապիտալի նորմատիվային մեծությանը համահունչ, որքան շատ լինի պարտավորությունների գումարի չափը, այնքան մեծ կլինեն վարկային ներդրումները: Միաժամանակ, 5-րդ հարաբերակցությունն էլ իր հերթին արժևորվում է յուրաքանչյուր առևտրային բանկի բազմարկիչի (մուլտիպլիկատորի) համար, քանի որ, որքան մեծ լինեն ընդհանուր կապիտալի մեկ միավորին բաժին ընկնող վարկային ներդրումները, այնքան տվյալ բանկը հուսալի կլինի:

Ինչպես 5-րդ, այնպես էլ 6-րդ հավասարման իմաստները պարզաբանելու համար կազմենք աղյուսակ 7-ը՝ ըստ 2013թ-ի 3-րդ եռամսյակի դրության:

Աղյուսակ 7-ի ելակետային տվյալները վկայում են, որ ուսումնասիրվող տարվա ինն ամսվա կտրվածքով, առևտրային բանկերի կողմից ստացված փաստացի գուտ շահույթի մեծությունը կազմում է 250,732 մլրդ դրամ, և որում ամենամեծ բաժինն ընկնում է «Ելչ-Էս-Բի-Սի բանկ Յայաստան»՝ 6,389 մլրդ դրամ, «ՎՏԲ Յայաստան բանկ»՝ 4,012 մլրդ դրամ, «Ակբա-կրեդիտ-ագրիկո բանկ»՝ 3,921 մլրդ դրամ և «Ինեկոբանկ»՝ 3,617 մլրդ դրամ, ՓԲԸ-երին:

Վերջնական արդյունքում, հաշվարկային տվյալներից *ROA*-ն, *ROE*-ն ու բազմարկիչն ունեն հետևյալ պատկերը, երբ դրանք համեմատում ենք աղյուսակ 7-ում բերված համապատասխան տվյալների հետ:

Այսպես, նույն վերոնշյալ առևտրային բանկերից «Ելչ-Էս-Բի-Սի բանկ Յայաստան» ՓԲԸ-ն, որն ապահովել է *ROA*-ի 2,8%, *ROE*-ի 15,49% և բազմարկիչի 5,5:1 հարաբերակցություն, ընկած է 3-րդ խմբում, «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն ապահովել է *ROA*-ի 1,56%, *ROE*-ի 11,84% և բազմարկիչի 6,9:1 հարաբերակցություն և ընկած է նորից 3-րդ խմբում, իսկ ահա «Ակբա-կրեդիտ-ագրիկո բանկ» ՓԲԸ-ն ապահովել է *ROA*-ի 1,49%, *ROE*-ի 7,42% և բազմարկիչի 5,0:1 հարաբերակցություն և ընկած է 2-րդ խմբում: Ընդհանրաց-ված ձևով պետք է նշել, որ առևտրային բանկերից ոչ մեկը դեռևս չի ապա-հովում *ROE*-ի 20% շահութաբերություն և բազմարկիչի 10:1 հարաբերակ-ցություն: Որպեսզի համոզվենք, թե վերջինիս փոփոխություններն ինչ գործոններով են պայմանավորված, կատարենք պարզաբանումներ՝ աղյուսակ 7-ի հաշվարկային տվյալներով:

Այսպես, ուսումնասիրված 21 առևտրային բանկերի գծով բազմարկիչի (6,1:1) վրա ազդում են հետևյալ գործոնները.

1 մլրդ դրամ գուտ շահույթին բաժին են ընկել 77,11 մլրդ դրամ ակտիվներ, կամ այլ կերպ՝ ակտիվների փոխհատուցումը 1 միավոր գուտ շահույթի

հաշվին կազմել է 77,11 միավոր, որն ընդհանուր առմամբ դեռևս վատ ցուցանիշ է տնտեսապես զարգացած երկրների հետ համեմատած: Ամենաբարձր մեծությունն արձանագրվել է «Ակբա-կրեդիտ-ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ում՝ 67,32 մլրդ դրամ և «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում՝ 64,29 մլրդ դրամ, քանի որ հավասարամեծ են եղել հարկումից զուտ շահույթի և ընդհանուր ակտիվների արժեքային չափերը:

- 1 մլրդ կանոնադրական կապիտալին բաժին է ընկել 0,141 մլրդ դրամ զուտ շահույթ, իսկ ամենաբարձրը գրանցվել է «Եյչ-Էս-Բի-Սի բանկ Յայաստան» ՓԲԸ-ում, քանի որ զուտ շահույթի մեծությամբ (6,389 մլրդ դրամ) համահունչ փոքր է եղել կանոնադրական կապիտալի (18,434 մլրդ դրամ) գումարի չափը, իսկ որքան մեծ լինի կանոնադրական կապիտալին համապատասխան զուտ շահույթի գումարի չափը, այնքան ավելի լավ, ուրեմն յուրաքանչյուր բաժնետոմս ավելի արդյունավետ է օգտագործվել:
- 1 մլրդ դրամ պարտավորություններին բաժին է ընկել 0,110 մլրդ դրամ կանոնադրական կապիտալ և համեմատության առումով՝ որքան պարտավորությունները շատ լինեն կանոնադրական կապիտալի նկատմամբ, այնքան ավելի լավ, քանի որ պարտավորություններն են նպաստում վարկային պորտֆելի ձևավորմանը: Այդպիսի առևտրային բանկերից են «Արդ-չինիսկվեստբանկ», «Կոնվերսբանկ», «ՎՏԲ-Յայաստան բանկ» ՓԲԸ-երը:
- 1 մլրդ դրամ վարկային ներդրումներին բաժին է ընկել 1,344 մլրդ դրամ պարտավորություններ, որոնք իրենց էության մեջ հավասարամեծ են միմյանց նկատմամբ և ամենամեծ հարաբերակցությունը գրանցված է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում՝ 1,588: Այս հարաբերակցությունը խիստ կարևորվում է յուրաքանչյուր բանկի բազմարկիչի (մուլտիպլիկատորի) կարգավորման գործընթացում:
- 1 մլրդ դրամ ընդհանուր կապիտալին բաժին ընկնող վարկային ներդրումների գումարի չափը կազմել է 3,80 մլրդ դրամ: Ուսումնասիրություններից պարզվում է, որ որքան մեծ լինի 1 միավոր ընդհանուր կապիտալի հաշվով վարկային ներդրումների գումարի չափը, այնքան տվյալ բանկը տրամադրված վարկերի գծով կապահովի ավելի շատ տոկոսային եկամուտներ և դրան համահունչ՝ շահույթի ստացում:

Այսպիսով, մեր կողմից ներկայացված բազմագործոն ինդեքսային մեթոդով հավասարումից և դրա հիման վրա կատարված վերլուծությունից ելնելով, առաջարկում ենք՝ վերոնշյալ հիմնական ցուցանիշների փոխկապվածությունների սորովի հարաբերակցություններ (կանոնադրական կապիտալ և պարտավորություններ, պարտավորություններ և վարկային ներդրումներ, վարկային ներդրումներ և ընդհանուր կապիտալ), որոնք իրենց էական ազդեցությունն են թողնում բանկի բազմարկիչի վրա:

**ՀՀ առևտրային բանկերի հիմնական ցուցանիշների փոխկապակցությունների հաշվարկ՝
ըստ 2013թ-ի 3-րդ եռամսյակի՝**

հ/հ	Բանկերի անվանումները	Երազեության տվյալներ							Հաշվարկային ցուցանիշներ						
		Ատրիվներ (Ն)	Շրտի կապիտալ (ԸԿ)	Շրտի փութ (Պ)	Կանոնադր. կապ. (ԿԿ)	Չուտ շահ. (ՉԾ)	Վարկային ներդր. (ՎՆ)	ROA, % ՉԸԱ	ROE, % ՉԸԸԿ	Բաժնի թափարկիչ ՍԸԿ	ՍԸԾ	ՉԸԿԿ	ԿԿ/Պ	Պ/ՎՆ	ՎՆ/ԸԿ
1		2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	Ալբա-կրեդիտ - ագրիկոլ բանկ ՓԲԸ	263,946	52,852	211,094	30,000	3,921.0	167,560	1.49	7.42	5.0	67.32	0.131	0.142	1,260	3.17
2	Ել-Էս-Բի-Սի բանկ ՓԲԸ	227,882	41,239	186,643	18,434	6,389.0	133,646	2.80	15.49	5.5	35.66	0.347	0.099	1,397	3.24
3	Կոլդինկեստրանկ ՓԲԸ	251,874	40,392	221,482	15,514	4,132.0	161,017	1.58	10.23	6.5	63.37	0.266	0.070	1,376	3.99
4	ՎՏԲ - Դայաստան բանկ ՓԲԸ	291,116	35,614	255,502	13,906	4,012.0	203,526	1.38	11.27	8.1	72.56	0.289	0.054	1,255	5.71
5	Կոսկոս բանկ ՓԲԸ	119,430	17,165	102,265	4,923	551.0	74,287	0.46	3.21	7.0	216.75	0.112	0.048	1,377	4.33
6	Ֆոնիսան ՓԲԸ	162,333	19,420	142,913	11,401	995.0	108,217	0.61	5.12	8.4	163.15	0.087	0.080	1,321	5.57
7	Դայիլոնբանկ ԲԲԸ	70,343	10,225	60,118	2,333	681.8	37,853	0.97	6.67	6.9	103.17	0.292	0.039	1,582	3.70
8	Սմելոբանկ ՓԲԸ	296,625	38,978	257,647	25,476	4,614.0	172,411	1.56	11.84	7.6	64.29	0.181	0.099	1,494	4.42
9	Ինկոբանկ ՓԲԸ	123,572	27,773	101,799	7,894	3,617.0	78,153	2.93	13.0	4.4	34.16	0.458	0.078	1,303	2.81
10	Դայիլոնբանկ ՓԲԸ	188,399	22,468	165,934	17,500	1,640.3	128,645	0.87	7.30	8.4	114.86	0.094	0.105	1,290	5.73
11	Սնելդ բանկ ՓԲԸ	60,736	13,366	47,370	14,300	-1,141.0	33,910	-1.88	-8.54	4.5	-53.23	-0.080	0.302	1,397	2.54
12	Սոքոսբանկ	157,592	21,351	136,241	16,452	413.0	98,784	0.26	1.93	7.4	381.58	0.025	0.121	1,379	4.63
13	Սոքոսբանկ ՓԲԸ	91,086	13,186	77,900	6,561	480.2	62,705	0.53	3.64	6.9	189.68	0.073	0.084	1,242	4.76
14	Ստարոստրանկ ՓԲԸ	105,280	18,765	86,515	8,335	2,400.1	60,083	2.28	12.79	5.6	43.86	0.288	0.096	1,440	3.20
15	Ստալիբանկ ՓԲԸ	58,854	13,913	44,941	7,002	1,094.2	27,541	1.86	7.86	4.2	53.79	0.150	0.156	1,632	1.98

16	Հարգացան ձախ. քանկ ԲԲԸ	61.188	8.657	52.531	4.557	337.4	36.085	0.55	3.90	7.1	181.35	0.074	0.087	1.380	4.40
17	Պրոմեթեյանսկ ԿՊԸ	56.622	21.403	35.219	14.400	1.116.3	32.281	1.97	5.22	2.6	50.72	0.078	0.409	1.081	1.51
18	Բիլլուրանկ-Ջալատան	42.599	8.908	33.691	8.382	-242.6	24.186	-0.57	-2.72	4.8	-175.59	-0.029	0.249	1.303	2.72
19	ԲՏԱ քանկ ՓԲԸ	15.544	5.707	7.837	6.520	102.9	6.230	0.66	1.80	2.7	151.06	0.016	0.832	1.258	1.09
20	Պոլիտեխտ քանկ ՓԲԸ	48.652	8.591	40.061	9.990	-52.4	38.884	-0.11	-0.61	5.4	-828.47	-0.005	0.249	1.030	4.53
21	Սելլարթ քանկ ՓԲԸ	17.908	10.955	6.953	6.850	209.0	4.523	1.17	1.91	1.6	85.68	0.031	0.985	1.537	0.41
	Ընդամենը	2.719.582	444.923	2.274.659	250.732	35.270.6	1.082.508	1.30	7.93	6.1	77.11	0.141	0.110	1.344	3.80

• Այդուհանդերձ սերկայացված հաշվարկները հեղինակին են:

Ատենախոսության *եզրակացություններ* բաժնում ամփոփվել և հակիրճ ներկայացվել են հետազոտության հիմնական եզրակացություններն ու առաջարկությունները.

1. Ավանդատ է, որ յուրաքանչյուր երկրի տնտեսության զարգացման և կարգավորման գործընթացում կարևորվում է բանկային համակարգը, որը համարվում է պետության առանձին տնտեսվարող սուբյեկտների, բնակչության և այլ կազմակերպությունների գործունեությունը: Ուստի այդ առումով էլ աշխարհի բոլոր երկրներում, այդ թվում նաև՝ Հայաստանի Հանրապետությունում, իրենց տնտեսական, քաղաքական առանձնահատկություններից ելնելով, ունենում են զարգացման պատմական փուլեր: Կատարված ուսումնասիրությունները վկայում են այն իրողությունը, որ դեռևս կան անհամամասնություններ տնտեսության իրական ու ֆինանսական հատվածների միջև, քանի որ արտադրական գործընթացներն ավելի դանդաղ տեմպերով են ընթանում, քան բանկային համակարգի զարգացումն է: Հետևաբար, հանրապետությունում առկա տնտեսական միջավայրը բավարար չէ ավելի կայուն և կատարելագործված բանկային գործունեություն իրականացնելու համար, իսկ վերջինիս հասնելու համար անհրաժեշտ է ՀՀ կառավարության կողմից տնտեսական գործընթացների իրականացման համար այնպիսի իրական համալիր միջոցառումների ամփոփ ծրագիր մշակել, որի արդյունքում էլ միայն բանկային համակարգը կարող է դառնալ երկրի տնտեսության կայունության վրա նպաստավոր ազդեցություն ունեցող այնպիսի միջավայր, ինչպիսին տնտեսապես զարգացած երկրներում է:

2. Ուսումնասիրություններից պարզվում է, որ ցանկացած երկրում հուսալի բանկային համակարգը պայմանավորված է ոչ միայն արտաքին՝ տնտեսական, քաղաքական, դրամավարկային, ներմուծում և արտահանում գործոններով, այլ նաև ներքին՝ երկրի ներսում հաճախորդներից ավանդների ներգրավմամբ, հաճախորդներին վարկերի տրամադրմամբ, տոկոսադրույքների սահմանմամբ, գործող բանկային օրենսդրությամբ, որակյալ կադրերով ապահովվածությամբ, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվներով և նմանաիպ այլ գործոններով: Վերոնշյալներից բանկային համակարգի հուսալիության ապահովման կարևորագույն նախապայմաններից են տնտեսական նորմատիվները, որոնց հատուկ ուշադրություն ենք դարձրել ուսումնասիրության գործընթացում, մասնավորապես՝ ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր կապիտալի համարժեքության և իրացվելիության նորմատիվների մեծությունների հետ կապված: Վերլուծությունների արդյունքում պարզվել է, որ U^1 , U^2 , U^3 նորմատիվային մեծություններն, ըստ ուսումնասիրվող տարիների, ունեցել են ոչ գծային բնույթ: Հատկապես դրանցից ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցությունն ամենաբարձրն է եղել 2006 թվականին, որը կազմել է 34,9%, իսկ ամենացածրը եղել է 2012 թվականին՝ 16,8%: Տվյալ հարաբերակցության տատանումները բնորոշ են ռիսկային կշռված ակտիվների ավելացման և դրան համահունչ՝ ընդհանուր կապիտալի նվազեցման, կամ՝ ընդհակառակը: Նույն օրինաչափությունը նկատելի է նաև բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների հարաբերակցության գծով: Արդյունքում, 2009 թվականի վերջում այն կազմել է 140,8%, այն էլ նախորդ տարվա (2008թ.) ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո: Սակայն դրանից հետո տեղի է ունեցել նվազման միտում և 2012 թվականին եղել է 126,1%, իջնելով 14,7%-ով, այսինքն՝ բարձր իրացվելի ակտիվները պակասել են ի

համեմատ ցպահանջ պարտավորությունների: Ուստի, յուրաքանչյուր առևտրային բանկ, որպեսզի գտնվի հուսալի պայմաններում, առաջարկում ենք՝ ցպահանջ պարտավորությունների ավելացման նպատակով հաճախորդների համար ստեղծել նպաստավոր պայմաններ (թեկուզ անհրաժեշտության դեպքում ցածր տոկոսադրույքով վարկային միջոցների տրամադրումը), որն էլ իր հերթին կնպաստի ներգրավված ավանդների հաշվին ավելացնելու բարձր իրացվելի ակտիվները:

3. Առևտրային բանկերի գործունեության կարգավորման հիմքը նրանց ենթակայության տակ գտնվող ակտիվներով ու պասիվներով պայմանավորված ամփոփ ցուցանիշների միջև գործող փոխկապվածություններն են, որոնք նույնպես իրենց հերթին օժտված են ձևավորման գործոններով: Վերջիններիս կազմում իր ուրույն տեղն ունի հաշվեկշռի իրացվելիությունը, մասնավորապես, կապված ոչ միայն ակտիվների պարտավորությունների, այլ նաև՝ դրանցով պայմանավորված սպասվելիք շահույթի հետ: Ուստի այդ առումով էլ մեր կողմից առանձնացրել և առաջարկել ենք այնպիսի գործոնների փոխկապվածություններ, ինչպիսիք են՝ բանկի իրացվելիության ընդհանուր պահուստները (սկզբնական և երկրորդային), վարկային ու ներդրումային կարողությունը, գործող կապիտալի և ակնկալվող շահույթի մեծությունը: Սրանք այն կարևորագույն գործոններն են, որոնք իրենց էական ազդեցությունն են թողնում բանկի իրացվելիության վրա:

4. Ուսումնասիրություններից պարզվում է, որ տարեց-տարի ավելանում են 33 առևտրային բանկերի ինչպես ակտիվների, այնպես էլ՝ դրանց համահունչ, ընդհանուր կապիտալի պարտավորությունների արժեքային մեծությունները: Այսպես, ըստ կազմված աղյուսակների և գծապատկերների (2.1.1, 2.1.2, 2.1.3) ակնհայտ է, որ 2009-2012թթ-երի վերջի դրությամբ ընդհանուր կապիտալն ավելացել է 122.702,3 մլն. դրամով, պարտավորություններն ավելացել է 943.362,7 մլն. դրամով, իսկ ընդհանուր ակտիվները՝ 1.066,065 մլն. դրամով, որը դրական երևույթ է: Սակայն ցանկալի է, որ 33 Կենտրոնական բանկը վարի այնպիսի քաղաքականություն, որպեսզի առևտրային բանկերը կարողանան ակտիվային ու պասիվային գործառնությունները ճիշտ կազմակերպել՝ տարբեր հաճախորդների թվաքանակի ավելացման ու դրանց ներգրավման առումով: Մասնավորապես, ի հաշիվ պարտավորությունների ավելացման, բանկը դառնա էլ ավելի իրացվելի:

5. Յուրաքանչյուր բանկի գործունեության վերաբերյալ պատկերացում կազմելու համար կարևորված է ակտիվների և պասիվների վերլուծությունը տարբեր կինակագրական մեթոդներով: Ուստի այդ առումով մեր առջև նպատակ են դրել կատարել վերլուծություն՝ կառուցվածքային, համեմատական և խմբավորման մեթոդներով, վերջին վեց տարիների (2007-2012թթ.) կտրվածքով: Արդյունքում, ուսումնասիրություններից և կատարված վերլուծություններից պարզվում է, որ կառուցվածքային առումով ինչպես ակտիվների, այնպես էլ պասիվների ընդհանուր հանրագումարներում, առևտրային բանկերից յուրաքանչյուրի տեսակարար կշիռն ունեցել է թե՛ աճման, և թե՛ նվազման միտումներ: Միաժամանակ հարկ է նշել, որ դրանցից ցանկացած բանկ ունեցել է իր գրաված դիրքը: Այսպես, ըստ ուսումնասիրվող տարիների, 2012 թվականի վերջի դրությամբ ակտիվների տեսակարար կշիռներով առաջնային դիրքերում են եղել՝ Ազգա-կրեդիտ-ագրիկոլ բանկը (10,3%), Ամերիաբանկը (10,2%) և ՎՏԲ Գայաստան բանկը (8,8%) ՓԲԸ -երը: Միաժամանակ, խմբավորման միջոցով կատարված համեմատական վերլուծությունը վկայում

է, որ վեց խմբի բաժանված առևտրային բանկերի թիվը, որոնց ակտիվները 80 մլրդ դրամից բարձր միջակայքում են գտնվում, 2012թ.-ին կազմել է 12-ը, 2007թ.-ի 3-ի փոխարեն, իսկ պարտավորությունների գծով՝ համապատասխանաբար 11-ը՝ 1-ի փոխարեն, որը բավականաչափ հուսադրելի ցուցանիշ է: Արդյունքում, ըստ տարիների տեղի է ունեցել առևտրային բանկերի խոշորացում: Ցանկալի է, որ այս պրոցեսը լինի շարունակական, բանի որ դրանով իսկ մեծանում է թե՛ ակտիվների և թե՛ պարտավորությունների իրացվելիությունը:

6. Ցանկացած առևտրային բանկի նպատակը առավելագույն չափով շահույթի ստացումն է, ուստի այդ առումով կատարված է 33 առևտրային բանկերի եկամուտների և ծախսերի կազմի ու կառուցվածքի վերլուծություն, նույն՝ 2004-2012 թթ-երի կտրվածքով: Արդյունքում պարզվել է, որ ըստ ուսումնասիրվող տարիների, կառուցվածքային առումով աճել են համապատասխանաբար ստացված՝ տոկոսային ու ոչ տոկոսային եկամուտների և կատարված՝ տոկոսային ու ոչ տոկոսային ծախսերի հանրագումարները, իսկ դրանց համահունչ, աճել է նաև վերջիններիս տարբերության հետևանքով շահութահարկի վճարումից հետո ձևավորված զուտ շահույթի մեծությունը: Այսպես, եթե 2004 թվականի վերջում այն եղել է 17 156 մլն. դրամ, ապա 2013 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմել է 42.471 մլն. դրամ և տեղի է ունեցել ավելացում 2.315 մլն. դրամի չափով կամ հավելածի տեմպը կազմել է 147,6%: Ուստի ելնելով վերջինիս կարևորությունից, առաջարկում ենք 33 Կենտրոնական բանկի հսկողության ներքո առևտրային բանկերի կողմից վարվող բանկային արդյունավետ քաղաքականություն՝ կապված ակտիվային ու պասիվային գործառնությունների հետ, մասնավորապես՝ բանկերի համար կարևորագույն համարվող վարկերի տրամադրում, որոնց հիմքում ընկած են տարբեր հաճախորդների համար արժևորվող տոկոսադրույքների ճիշտ սահմանումը:

7 Ուսումնասիրության ընթացքում պարզել և բացահայտել ենք, որ ինչպես բոլոր ժամանակներում, այնպես էլ՝ ներկայումս, առևտրային բանկերի արդյունավետ գործունեություն կազմակերպելու համար իրենց ուրույն տեղն ունեն բանկի իրացվելիությունն ու վճարունակությունը, որոնք լրացնում են մեկը մյուսին և պայմանավորված են ներքին ու արտաքին գործոններով: Ներքին գործոններից են՝ բանկի սեփական կապիտալի համարժեքությունը, մասնագիտացումը, ծառայությունների դիվերսիֆիկացումը, աշխատակիցների որակավորման մակարդակը, բանկի գործընկերների ֆինանսական կայունությունը և կառավարման մակարդակը, իսկ արտաքին գործոնների թվին են դասվում՝ երկրում տիրող ընդհանուր քաղաքական և տնտեսական իրավիճակը, բանկային օրենսդրության կատարելության աստիճանը, ԿԲ-ից վարկեր ստանալու հնարավորությունը, դրամական ու արժեթղթերի շուկաների զարգացվածությունը: Այստեղից հետևություն և առաջարկություն, որ յուրաքանչյուր առևտրային բանկ հուսալի գործունեություն իրականացնելու և վճարունակություն ապահովելու համար հնարավորինս պետք է հաշվի առնի վերոշարադրյալ գործոնները:

8. Ուսումնասիրությունների ընթացքում պարզվել է, որ առևտրային բանկերի ակտիվների և պասիվների փոխկապվածությունների բացահայտման համար կարևորվում են դրանց համահունչ գործող ոլիսներն ու դրանց գնահատումը: Վերջինիս վերլուծության համար գոյություն ունեն երկու մեթոդներ՝ որակական և քանակական: Ըստ որակական վերլուծության, բացա-

հայտվում են բանկի հաշվեկշռի առանձին բաժինների և դրանցով պայմանավորված խումբ ցուցանիշների փոխկապվածությունների ռիսկի առաջացման աղբյուրներն ու պատճառները՝ կապված ակնկալվող եկամուտների և հնարավոր բացասական հետևանքների հետ, որոնք կարող են ստացվել ռիսկային վճռի կայացման ու իրականացման արդյունքում: Իսկ քանակական վերլուծության նպատակը՝ դա ռիսկի քանակական գնահատականի ստացումն է, որին համահունչ ներկայումս կիրառվում են մի շարք վերլուծական մեթոդներ, որոնցից ամենատարածվածներն են՝ փորձագիտական, հավանականային-վիճակագրական և վերջերս լայն տարածում ստացած VAR մեթոդները:

9. Առևտրային բանկերի գործունեության գնահատման համար խիստ կարևորվում են հիմնական ցուցանիշներ համարվող՝ զուտ շահույթի, ակտիվների, ընդհանուր կապիտալի, կանոնադրական կապիտալի, պարտավորությունների, վարկային ներդրումների փոխկապվածությունները: Դրանցից հատկապես առանձնանում են՝ բանկի բազմարկիչի, ROE-ի և ROA-ի միջև փոխկապվածությունները, որոնցով գնահատվում է բանկային համակարգի, այդ թվում նաև՝ առևտրային բանկի, ֆինանսական դրությունը: Վերոնշյալ մեթոդով կատարվող վերլուծությունն ունի մեծ կիրառություն, սակայն բարելավման առումով առաջարկել ենք վերոնշյալ հիմնական ցուցանիշների միջև տրոփի հարաբերակցություններ (կանոնադրական կապիտալ և պարտավորություններ, պարտավորություններ և վարկային ներդրումներ, վարկային ներդրումներ և ընդհանուր կապիտալ), որոնք իրենց եական ազդեցությունն են թողնում բանկի բազմարկիչի վրա: Առաջարկված մեթոդը հիմնավորված է ՀՀ առևտրային բանկերի համապատասխան ելակետային տվյալներով, դրանցով պայմանավորված վերլուծություններով ու տնտեսագիտական մեկնաբանություններով:

Ատենախոսության հիմնական արդյունքները տպագրված են հետևյալ հրապարակումներում.

1. Ահարոնյան Ս.Ա., ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական արդյունքների կառուցվածքային և դինամիկ փոփոխությունների վերլուծությունը, Материалы международ. научной конференции, Ереван, ГАУА2012с.28-33.
2. Ահարոնյան Ս.Ա., ՀՀ առևտրային բանկերի հիմնական հաշվեկշռային ցուցանիշների դինամիկ փոփոխությունները 2003-2011թթ. ընթացքում, Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում, N35, Երևան - 2012, էջ 21-27:
3. Ահարոնյան Ս.Ա., ՀՀ առևտրային բանկերի ակտիվների վերլուծությունը կառուցվածքային և խմբավորման մեթոդով, ՀՀ ԳԱԱ Մ. Զոթանյանի անվ. ՏԻ, Գիտական հոդվածների ժողովածու - 2013, Գիրք-1, էջ 16-25:
4. Ահարոնյան Ս.Ա., ՀՀ առևտրային բանկերի պարտավորությունների համեմատական վերլուծությունը, ՀՀ ԳԱԱ Մ. Զոթանյանի անվ. ՏԻ, Գիտական հոդվածների ժողովածու - 2013, Գիրք-1, էջ 21-25:
5. Ահարոնյան Ս.Ա., ՀՀ առևտրային բանկերի որոշ ամփոփ ցուցանիշների փոխկապվածությունները և դրանց ձևավորման գործոնները, Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում, N8, Երևան-2012թ., էջ 139-148:
6. Ահարոնյան Ս.Ա., Առևտրային բանկերի հիմնական ցուցանիշների փոխհարաբերակցություններով ակտիվների և պասիվների գնահատման տրոփի մոտեցում, Ֆինանսներ և էկոնոմիկա N11-12 (161-162), Նոյեմբեր-դեկտեմբեր 2013, էջ 58-60:

**Проблемы улучшения оценки активов и пассивов (на примере
коммерческих банков РА)**

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.03 – “Финансы, бухгалтерский учет”.

Защита диссертации состоится 5-ого июня 2014 года в 15³⁰ часов на заседании Специализированного Совета 014 ВАК РА по экономике, действующего в Армянском государственном экономическом университете, по адресу: 0025, г. Ереван, ул. Налбандяна, 128.

РЕЗЮМЕ

Банковская система является одной из важнейших инфраструктур рыночной системы, включенные в нее коммерческие банки осуществляют различные функции, вовлекая денежные средства клиентов, и, одновременно являясь посредником при перераспределении капитала, значительно увеличивая общую эффективность продукции. В частности, в последние годы в РА, в условиях развивающихся товарных и финансовых рынков осложнилась структура банковской системы, выросла роль и независимость коммерческих банков, сформировались финансовые организации нового типа, продолжают поиски путей повышения эффективности обслуживания со стороны банков в области внутренних и внешних экономических связей, делаются попытки лучшим образом разделить сферу деятельности специализированных финансовых и банковских организаций.

В настоящее время банковская система Армении находится на стадии развития.

Достижение здоровой банковской системы в первую очередь обусловлено выбором эффективных методов оценки и анализа, а также законодательного регулирования функций данной системы и правильной организацией этих процессов, которые осуществляются с помощью экономических нормативов, отчетов, а также с помощью систем их оценивания.

Однако, исходя из вышеизложенного, диссертант счел необходимым выявить взаимосвязь между активами и пассивами находящимися в подчинении коммерческих банков, указать пути их улучшения, чем и обусловлена актуальность выбранной темы и необходимость ее исполнения.

Целью диссертации является на основе иностранного и отечественного опыта представить теоретические и практические направления по улучшению взаимосвязей между активами и пассивами коммерческих банков. Для достижения указанных целей поставлены следующие задачи:

изучить банковскую систему РА с ее особенностями и проанализировать основные балансовые показатели банка;
выявить факторы формирования взаимосвязей сводных показателей коммерческих банков;
выполнить структурный и сравнительный анализ обязательств и финансовых результатов активов коммерческих банков и представить соответствующие этому предложения;
проанализировать и оценить ликвидность активов и пассивов коммерческих банков;
разработать новый подход по оценке активов и пассивов, обосновывая это взаимосвязями между основными показателями.

В процессе исследования получен ряд результатов, имеющих теоретическое и практическое значение, из которых, как научная новизна особенно выделяются следующие:

- на основе анализа основных экономических нормативов коммерческих банков РА по годам выделены и обоснованы величины нормативов достаточности и ликвидности капитала как наиболее значимых факторов обеспечения надежности банковской системы;
выполнен сравнительный и структурный анализ динамики отдельных разделов (активов, общего капитала, обязательств) сводного баланса коммерческих банков с использованием метода группировки и на основе экономических обоснований выдвинуто предложение по укрупнению банков в соответствии с международным опытом;
выявлены механизмы взаимосвязи между сводными показателями (ликвидности, платежеспособности, ожидаемой прибыли) коммерческих банков и в этом контексте с целью содействия их функционирования предложена совокупность внутренних и внешних факторов;
выявлены и обоснованы основные показатели коммерческих банков РА соотношением которых обусловлена разработка и предложение нового подхода к оценке активов и пассивов путем выбора в качестве результативного показателя мультипликатора общего капитала банка.

Практическое значение результатов исследования заключается в том, что в работе нашли свое место как методо-теоретический, так и содержательный анализ, который может быть полезен для работы как в банках, так и в государственных структурах, организациях, осуществляющих научно-исследовательскую работу в рассматриваемой области, а также для других заинтересованных лиц.

ISSUES ON IMPROVEMENT OF THE EVALUATION OF THE ASSETS AND LIABILITIES (ON THE EXAMPLE OF COMMERCIAL BANKS IN THE REPUBLIC OF ARMENIA)

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty 08.00.03-"Finance, accounting".

The defense of the thesis will take place on June 5, 2014 at 15³⁰ o'clock at Council of Economics of the SCC RA at Armenian State University of Economics: 128 M. Nalbandyan Street, Yerevan 0025.

ABSTRACT

The banking system is one of the most important integral parts of the market economy infrastructure, and the commercial banks as players of the system make various transactions: by attracting financial resources from various clients as intermediaries reallocate the attracted capital, thus increasing general efficiency of the products. Namely, in the Republic of Armenia, in terms of the constantly developing goods and financial markets over the last several years, the structure of the banking system has obviously become more sophisticated, and the role and the independence of the commercial banks has increased.

Currently, the banking system of Armenia is in the development stage. Ensuring healthy banking system, is, first of all, associated with the legal regulation of the performance of that system, the choice of the efficient assessment methods and the analysis, and how these processes are structured and carried out by closely monitoring economic norms, and statements, and through assessment systems as well.

Hence, taking into account the above-stated arguments the author made it important to identify the interplay of the assets of the commercial banks with their liabilities, and to present the ways to improve it, thus explaining the urgency of the chosen topic and the need to conduct the research.

The goal of the dissertation thesis is to propose theoretical and applied methods to improve the interplay of the assets of commercial banks of the Republic of Armenia with their liabilities by studying the practices utilized both in Armenia and abroad. Hence, in order to meet the above stated goal the following objectives were set to:

- study and banking system of the Republic of Armenia by taking into account its peculiarities and to analyze the main balance-sheet indicators of banks;
- identify those factors that cause the interplay among aggregated indicators of commercial banks;

- carry out comparative and structural analyses of assets, liabilities and other financial indicators of commercial banks and to propose respective recommendations;
- to analyse and evaluate the assets and liabilities of the commercial banks;
- to design the new approach to evaluate the assets and liabilities of the commercial banks based on the basic indexes.

Research results are of theoretical and applied implications and as scientific novelty the following results were stated:

the major economic hours of the commercial banks in RA were analyzed by the years period and as a result was separated and justified capital adequacy and liquidity normatives as a major factors to support the reliability of the banking system.

- the different parts of the bank's balance (assets, total capital, liabilities) were analyzed by the structural, comparable methods for the dynamy of the years, and were suggested to perform the magnification of the banks based on the economic evaluations and foreign experience.
- the interaction of the mechanisms total indexes of the banks were revealed (liquidity, solvency, expected profit) and as the result were suggested the contributing set of the external and internal factors.
- the major indexes of the banks in RA were revealed and by the interactions of them were designed and suggested the new approach of the evaluation of the assets and liabilities based on the multiplier of the total capital of the bank.

The applied implication of the research results are based on the fact that in the dissertation thesis methodological and theoretical and content analysis methods were utilized that could be useful for representatives of commercial banks, tax authorities, public institutions, and research organizations studying this issue, and for the others interested in this topic, as well.

